*ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

# ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԻՇԽՈՂ ԱԼԱՎԻԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (2015 Թ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

2015 թ. առաջին կեսին սիրիական ճգնաժամն ու երկրի ներսում զինված բախումները շարունակվում էին: Աստիճանաբար խորանում էին նաև ներհամակարգային խմորումները՝ սպառնալով Բաշար ալ-Ասադի վարչակարգի տապալմանը: Այս ուսումնասիրությունը նպատակ ունի քննության առնելու 2015 թ. առաջին կեսին Սիրիայում տեղի ունեցած իրադարձություններն ու ալավի-բաասական վարչակարգի ներսում կատարված փոփոխությունները:

Մերձավոր Արևելքի պատմության և քաղաքականության հայտնի ուսումնասիրողներից Ռայմոնդ Հիններբուշի կարծիքով Սիրիայի հարցով ՄԱԿ-ի հատուկ բանագնաց Ստեֆան դե Միստուրայի ակտիվ միջնորդական դիվանագիտության շնորհիվ սիրիական ճգնաժամի խաղաղ կարգավորման հարցով Ժնև 3-րդ[1] բանակցությունները հնարավոր է սկսվեն մոտ ապագայում, սակայն ռազմական իրադրությունը Սիրիայի ներսում թույլ է տալիս ենթադրել, որ այդ բանակցությունները հաջողությամբ ավարտելու հնարավորությունն այնքան էլ մեծ չէ:

---

[1] Ժնև 1-ին բանակցությունները Սիրիայի հարցով տեղի են ունեցել 2012 թ. հունիսի 30-ին Շվեյցարիայի Ժնև քաղաքում՝ Սիրիայի հարցով ՄԱԿ-ի հատուկ բանագնաց Քոֆի Անանի, իսկ Ժնև 2-րդ բանակցությունները տեղի են ունեցել 2014 թ. հունվարի 23-ից 31-ը Սիրիայի հարցով ՄԱԿ-ի երկրորդ բանագնաց Լախդար Բրահիմիի միջնորդությամբ: ՄԱԿ-ի հատուկ բանագնացների միջնորդությամբ կազմակերպվող այս բանակցությունները նպատակ են ունեցել հասնելու սիրիական ճգնաժամի խաղաղ կարգավորմանը: http://www.un.org/News/dh/infocus/Syria/ FinalCommuniqueActionGroupforSyria.pdf.,http://www.aljazeera.com/indepth/features/2014/01/explaining-geneva-ii-peace-talks-syria-201411814285393 7726.html.

Հետագոտողի ներկայացմամբ տարածաշրջանի պետություններ Սիրիան կարող են բաժանել մի շարք ազդեցության գոտիների: Իրանն ու Հիզբալլահը կձգտեն իրենց դիրքերը պահել Դամասկոսում, Կալամունի լեռնային շրջանում, Արևմտյան Հոմսում և Տարտուսում, Հորդանանը, Ծոցի երկրները և Իսրայելը Դարաայում և Կունեյտրայում աջակցություն կցուցաբերեն Ազատ սիրիական բանակին[2]: Թուրքիան և Կատարը կաջակցեն Իդլիբի և Հալեպի շրջաններում գործող զինված խմբավորումներին[3]: Իսլամական պետությունը կպահպանի իր դիրքերը Սիրիայի արևելքում՝ շարունակելով պայքարը քրդերի և կառավարական ուժերի դեմ[4]:

2015 թ. մարտի 28-ին սիրիական բանակը, չկարողանալով դիմակայել ահաբեկչական Ջաբհաթ Ան-Նուսրա (Սիրիացիների պաշտպանության ճակատ) խմբավորման ինտենսիվ հարձակումներին, նրանց զիջեց Սիրիայի հյուսիսարևմըտյան խոշոր բնակավայրերից Իդլիբը[5]: Չնայած կառավարական

---

[2] Ազատ սիրիական բանակը ստեղծվել է 2011 թ. հուլիսի 29-ին սիրիական ազգային բանակի դասալիք սպաների և զինվորների կողմից: Գլխավոր նպատակը ռազմական ճանապարհով բասասական վարչակարգի տապալումն էր Սիրիայում: 2015 թ. հուլիսից Սիրիական ազգային կոալիցիան, որն սիրիական ընդդիմության քաղաքական ղեկավար մարմինն է, Ազատ սիրիական բանակի գլխավոր շտաբի պետ նշանակեց բրիգադի գեներալ Ահմադ Բարին: 2013 թ. փետրվարի 28-ին ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Քերին հայտարարեց, որ ԱՄՆ-ը Ազատ սիրիական բանակին կտրամադրի ռազմական օգնություն, որը ներառում էր ռազմական այդ կառույցի անդամների մարզումները և նյութատեխնիկական ապահովումը: Այս ճանապարհով Ազատ սիրիական բանակն առաջին անգամ ԱՄՆ-ի կողմից ճանաչվեց որպես օրինակարգ ռազմական մարմին: Մանրամասն տե՛ս O'Bagy E., The Free Syrian Army, Middle East Security Report 9, Institute for The Study of War, March 2013.

[3] Իդլիբի և Հալեպի շրջաններում հիմնականում գործում են Թուրքիայի հատուկ ծառայությունների կողմից հրահանգավորվող զինված իսլամական ծայրահեղ գաղափարներով տոգորված խմբավորումները, որոնցից ամենահայտնիներն են Ահրար ալ-Շամի և Նուրադդին ալ-Զանկի գումարտակները: Մանրամասն տե՛ս Щегловин Ю. Б., О Развитии Военной Ситуации В Сирии, Институт Ближнего Востока, Москва, 16.08.2015. http://www.iimes.ru/?p=25599

[4] Lund A., Grim Expert Assessments of Syria's Peace Process, Carnegie Endowment for International Peace, 03.08.2015.

[5] Sly L., Syrian Rebels Take Strategic Town of Idlib , Washington Post, 28.03.2015.

ուժերի կողմից արված բազմաթիվ փորձերին՝ սիրիական բանակը չկարողացավ հետ գրավել Դամասկոսին հարող հյուսիսային և արևելյան շրջանները: Սիրիական բանակի առանձին ստորաբաժանումներ ձախողումներ գրանցեցին նաև Հալեպի և Դարաայի շրջաններում:

Ծայրահեղ ծանր վիճակում է գտնվում Սիրիայի տնտեսությունը: Բրիտանական Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտի՝ «Չեթիրմ Հաուզի» հետազոտող Դեյդիվ Բաթերի ուսումնասիրության համաձայն՝ 2011 թ. մարտից սկսած Սիրիայի տնտեսության արտադրողականությունը կրճատվել է շուրջ 50%-ով: Հսկայական կորուստներ են գրանցվել գյուղատնտեսական ապրանքների արտադրության, էներգետիկայի և արդյունաբերության տարբեր ոլորտներում: Լայնածավալ արտագաղթի արդյունքում Սիրիայի բնակչությունը 21 միլիոնից կրճատվելով հասել է 17.5 միլիոնի, իսկ դեռևս երկրի ներսում մնացած բնակչության 1/3-ը համարվում է ներքին տեղահանված: 2012 թ. հունվարից մինչև 2015 թ. մարտը երկրում գնաճը կազմել է 51%, սիրիական ազգային դրամը արժեզրկվել է 80%-ով[6]: Եվրախորհրդի արտաքին հարաբերությունների (European Council on Foreign Relations) հետազոտական կենտրոնի զեկույցի համաձայն՝ Սիրիայում մարդկային զարգացման ինդեքսը (Human Development Index/HDI) նվազել է՝ հասնելով 1977 թ. մակարդակին, այսինքն՝ այսօրվա միջին սիրիացին ունի նույն կյանքի տևողությունը, կրթության և աշխատանքային պայմաններն ունենալու պահանջները, ինչը նա ուներ շուրջ 38 տարի առաջ: Հաշվարկների համաձայն՝ տարեկան միջինը 5% անընդմեջ տնտեսական աճի դեպքում միայն 30 տարի անց հնարավոր կլինի Սիրիայի համախառն ներքին արդյունքի ծավալը հասցնել 2010 թ. արդյունքներին, որն այդ ժամանակ կազմել է 60.5 մլրդ ամերիկյան դոլար[7]:

---

[6] Butter D., Syria's Economy, Picking up The Pieces, Middle East and North Africa Program, June 2015. http://www.chathamhouse.org/sites/files/chathamhouse/field/field_document/20150623SyriaEconomyButter.pdf

[7] Yazigi J., Syria's War Economy, European Council of Foreign Relations, 07.04.2014. http://www.ecfr.eu/publications/summary/syrias_war_economy. Համաշխարհային բանկի տվյալներով ճգնաժամի հետևանքով ստեղծված հումանիտար աղետը երկրում գնալով վատթարանում է: Զոհվածների թիվը գերազանցում է 220 հազարը, շուրջ 840 հազար սիրիացիներ հակամարտության հետևանքով հաշմանդամ են դարձել: 3.8 միլիոն սիրիացիներ փախստականներ են, 1.5 միլիոնն ունեն ոչ փախստական

Չնայած արևմտյան որոշ հետազոտողների գնահատականներով[8] Բաշար Ալ-Ասադը կարողանում է պահել իշխանությունն Իրանի և Ռուսաստանի բազմակողմ աջակցության շնորհիվ, սակայն վաշինգտոնյան «Միդլ Իսթ Ինսթիթյութ» հետազոտական կենտրոնի աշխատակից և 2011-2014 թթ. Սիրիայում ԱՄՆ-ի դեսպան Ռոբերտ Ֆորդը գտնում է[9], որ առաջիկայում Սիրիայում համակարգային փոփոխություններն անխուսափելի են լինելու՝ մի շարք ռազմական և քաղաքական գործոններից ելնելով:

Առաջին գործոնը կառավարական ուժերի՝ պաշտպանություն կազմակերպելու ու հակահարված տալու անկարողությունն է: Չնայած զինված ընդդիմությունն Իդլիբի գրոհի մասին նախօրոք, շաբաթներ առաջ հայտարարություններ էր տարածել, սակայն իշխանություններն անկարող գտնվեցին, լրացուցիչ զորքեր կենտրոնացնելով, ուժեղացնել քաղաքի պաշտպանությունը, քանի որ սիրիական բանակը զինվորական ուժի պակաս ունի: Մարտի 28-ին՝ մարտական գործողությունների սկսվելուց մեկ շաբաթ անց, քաղաքն անցավ ընդդիմադիրների ձեռքը: Մարտի 25-ին երկրի հարավարևելյան շրջանում՝ Հորդանանի հետ սահմանին, իշխանությունները կորցրին Բուսրա Շամ բնակավայրը, իսկ արդեն ապրիլի 2-ին Հորդանանի հետ սահմանի ամենակարևոր անցակետերից վերջինը՝ Նասիբը: Հալեպի արևմտյան շրջանների պահպանությունը նույնպես վտանգված էր թիկունքային ապահովման հետ կապված խնդիրների առկայության պայմաններում: 2015 թ. մայիսին կատաղի մարտեր տեղի ունեցան պատմական Պալմիրայի (Թադմոր) համար մղված պայքարում: Մայիսի 13-ին «Իսլամական պետություն»[10] ահաբեկչական խմբավորման (այսուհետ՝

միգրանտի կարգավիճակ: Ավելի քան 12.2 միլիոն մարդ, այդ թվում՝ 5.6 միլիոն երեխաներ, ունեն հումանիտար օգնության կարիք: http://www.worldbank.org/en/country/syria/overview

[8] Taylor G., Russian, Iranian Loyalty to Bashar Assad tested as Syria Approaches Tipping Point, Washingtontimes, 29.06.2015. http://www.washingtontimes.com/news/ 2015/jun/29/russian-iranian-loyalty-to-bashar-assad-tested-as-/?page=all

[9] Ford R., The Assad Regime: The Beginning of the End, The Middle East Institute, Washington D.C., 24.04. 2015.

[10] Իրաքի և Լևանտի իսլամական պետությունը կամ Իրաքի և Սիրիայի իսլամական պետությունը, Իրաքի և Սիրիայի Արաբական Հանրապետության տարածքներում գործող սունիական ծայրահեղ ահաբեկչական

«Իսլամական պետություն») զինյալների կողմից Պալմիրայի պաշտպանությունն ապահովող կառավարական ուժերի դեմ սկսված գրոհն ավարտվեց մայիսի 20-ին «Իսլամական պետության» գրոհայինների հաղթանակով: Բրիտանական Ջեյնս Դիֆենս (Jane's Defence) պարբերականի ռազմական վերլուծաբան Մեթյու Հենմանի կարծիքով Պալմիրայի կորուստը կրճատում է կառավարական ուժերի օպերատիվ-մարտավարական հնարավորությունները՝ նրանց թողնելով Ջայշ Ալ-Ֆաթհի (Հաղթանակի) և «Իսլամական պետության» կողմից վերահսկվող տարածքների միջև: Բազմաթիվ վերլուծաբաններ, այդ թվում նաև Եվրասիա խումբ (Eurasia Group) քաղաքական հայտնի խորհրդատվական կենտրոնի վերլուծաբան Այհամ Քամիլը գտնում են, որ Պալմիրայից կառավարական ուժերի դուրս գալը ցույց է տալիս, որ սիրիական բանակն այլևս անկարող է իր վերահսկողությունը պահպանել երկրի ամբողջ շրջաններում և հետ քաշվելով կենտրոնանում է մեծ բնակչությամբ քաղաքների ու բնակավայրերի պաշտպանության ապահովման վրա[11]: Սիրիայի իշխանության տեսանկյունից կառավարական ուժերը, կորցնելով Պալմիրան, տակտիկական պարտություն են կրել, սակայն ռազմավարական հաղթանակ են գրանցել, քանի որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգություն համարվող Պալմիրայի գրավումն ահաբեկչական խմբավորման կողմից կարող էր նպաստել Սիրիայի նկատմամբ ԱՄՆ-ի վարած քաղաքականության վերանայմանը, ինչպես նաև կստիպեր Հորդանանին ավելի խորն ընկալել «Իսլամական պետության» սպառնալիքը, մյուս կողմից էլ կարող էր նպաստել, որպեսզի Իրաքն ուժեղացներ Սիրիայի հետ համագործակցու-

խմբավորում է: Ակտիվ ծայրահեղական գործունեություն է ծավալում նաև Արևելյան Լիբիայում, Եգիպտոսի Սինայի թերակղզում, ինչպես նաև Մերձավոր Արևելքի, Հյուսիսային Աֆրիկայի, Հարավային և Հարավարևելյան Ասիայի մի շարք այլ տարածքներում: 2014 թվականի հունիսի 29-ին ազդարարվեց Իրաքի և Լևանտի իսլամական պետության ստեղծումը, որի առաջնորդը դարձավ ունը Աբու Բաքր ալ-Բաղդադին: Հակադրվում է շիա իսլամի ուսմունքներին: Մանրամասն տե՛ս Alastair C., You Can't Understand ISIS if You Don't Know The History of Wahhabism in Saudi Arabia, The Huffington Post, 05.09.2014.

[11] Cassandra V., Analysis: ISIS Gains Momentum With Palmyra, Assad Squeezed on Multiple Fronts. NBC News. 23 May 2015.

թյունը[12]: Սակայն Դամասկոսում այս տեսակետը հորջորջողների սպասումները չարդարացան, քանի որ ԱՄՆ-ը դեռևս «Իսլամական պետության» դեմ պայքարում և ընդհանրապես Սիրիայի նկատմամբ իր քաղաքականության հիմնական դրույթների փոփոխության նշաններ ցույց չի տալիս: Իսկ Հորդանանի և Իրաքի հետ ավելի խորը համագործակցության վերաբերյալ տեղեկատվություն գոնե բաց հետախուզական աղբյուրները չեն տրամադրում:

Երկրորդ գործոնը վարչակարգի ներսում հետզհետե աճող անվստահության ու անհամաձայնության մթնոլորտն է: 2015 թ. մարտին իշխանությունները հայտարարեցին, որ երկրի անվտանգության համակարգի կարևորագույն մարմիններից երկուսի ղեկավարներն ազատվել են իրենց պաշտոններից: Սիրիայի Քաղաքական անվտանգության դիրեկտորատի ղեկավար Ռուստամ Ղազալեի և ռազմական հետախուզության ղեկավար Ռաֆիկ Շիհադեհի պաշտոնազրկումներն աննախադեպ էին: Այս երկու գործիչները գժտվել էին Սիրիայում տեղի ունեցող ռազմական գործողությունների ընթացքում իրանական տարրի ազդեցության ահագնացող աճի պատճառով. 2015 թ. մարտին Ռուստամ Ղազալեն իր թիկնապահ զորախմբի հետ միասին այցելեց Դամասկոսի Քֆար Սուսե արվարձան՝ ռազմական հետախուզության ղեկավարի հետ քննարկելու սիրիական պատերազմում ոչ սիրիական տարրերի՝ իրանական զինուժի և Հիզբալլահի ռազմական ներկայության խնդիրը: Այդ ժամանակ Ռուստամ Ղազալեն ծեծի ենթարկվեց Շեհադեհի մարդկանց կողմից՝ կորցնելով գիտակցությունը[13]: Որոշ հեղինակներ Ղազալեի և Շեհադեհի միջև հարաբերությունների վատթարացման պատճառներից են համարում մաքսանենգության ճանապարհով ստացված ֆինանսական միջոցների բաշխման հարցը[14]: Սաուդական ալ-Արաբիյա հեռուստաընկերության փոխանցմամբ Լիբանանի սուննիների առաջնորդ Սաադ Հարիրին հաստատել է, որ մինչև Ռուստամ Ղազալեն կհանդիպեր Շեհադեհի հետ Քֆար Սուսեում, նա փորձել էր

[12] Westall S., Syrian Insurgent Advances Put Assad Under pressure, Reuters, 02.06.2015. http://uk.reuters.com/article/2015/06/02/uk-mideast-crisis-syria-military-idUKKBN0OI1W520150602.

[13] Land A., The Death of Rustam Ghazaleh, Carnegie Endowment for Interantional Peace, Washington DC, April 30, 2015 http://carnegieendowment.org/syriaincrisis/?fa=59953

[14] http://www.alquds.co.uk/?p=307243

կապ հաստատել Հարիրիի կողմնակիցների հետ՝ ցանկանալով հայտարարությամբ հանդես գալ Հարիրիին պատկանող Ալ-Մուսթակբալ հեռուստատեսությամբ և հույժ գաղտնի տեղեկատվություն տրամադրել Ռաֆիկ Հարիրիի սպանության գործի հետ կապված[15]: Ապրիլի 24-ին Բեյրութի ասադամետ Ալ-Մայադին հեռուստակայանը հայտնում է, որ Ռուստամ Ղազալեն մահացել է[16]: Ղազալեի թաղման արարողությունը կայացավ Դամասկոսի Բաղդադ փողոցում գտնվող Լալա Մուստաֆա փաշա մզկիթում: Սիրիական պետական հեռուստաընկերությունը, որը սովորաբար մահազդ է տարածում հանրահայտ բարձրաստիճան պաշտոնյաների մասին, ոչ մի տեղեկատվություն այդ մասին չփոխանցեց, այս և թաղմանը ներկա փոքրաթիվ պաշտոնյաների և սպաների ներկայությունը ենթադրաբար խոսում է այն փաստի մասին, որ Ղազալեն սպանվել է բաասական վարչակարգի հետ իր ունեցած անհամաձայնությունների պատճառով:

Ղազալեի և Շեհադեհի պաշտոնանկությունները հետևում էին դեռևս 2014 թ. սեպտեմբերին երկու ալավի անվտանգության ծառայողների՝ Հաֆեզ Մախլուֆի և Սաքր Ռուստոմի հեռացումներին: Հաֆեզ Մախլուֆը, ով ղեկավարում էր հայտնի Անվտանգության գլխավոր դիրեկտորատի (Իդառաթ ալ-Աման Ալաամ) 40-րդ մասնաճյուղը Դամասկոսում[17], պաշ-

---

[15] ضرب حادثة من يوم قبل بنا تصلا رستم غزالي الحريري: http://www.alarabiya.net/ar/arab-and-world/syria/2015/04/28/

[16] A. Land, նշվ. աշխ.:

[17] Այս կառույցը շատ կարևոր գործառույթներ ունի: Այն պատասխանատու է քաղաքացիական անվտանգության համար: 40-րդ մասնաճյուղը ներքին գործերի նախարարության կազմում գտնվող Անվտանգության գլխավոր դիրեկտորատի մասնաճյուղերից է, որը վերահսկում է վարչակարգի և քաղաքական կուսակցությունների, առևտրային միությունների, համալսարանների և ուսանողների միջև հարաբերությունները՝ այդպիսով կառավարելով քաղաքացիական հասարակության գրեթե բոլոր ասպեկտները երկրում: Պատմականորեն 40-րդ մասնաճյուղը լուրջ ազդեցություն է ունեցել վարչակարգի ներսում: Սիրիայի նախկին նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի կառավարման շրջանում կառույցի ղեկավարն էր Մուհամմադ Նասիֆ Խեյրբեքը, որը հայտնի էր Աբու Ռաիլ անվամբ, նրան հաջորդեց հայտնի Բահջաթ Սուլեյմանը, որը կարողացել էր համոզել արդեն 2000 թ. սկզբներին նախագահ Բաշար ալ-Ասադին թույլ տալ քաղաքացիական հասարակության կոմիտեների ձևավորումը, որոնք պետք է նախաձեռնեին այսպես կոչված Դամասկոսյան գարուն: Սակայն հետագայում հին

տոնանկությունից հետո իշխանությունների իմացությամբ լքեց Սիրիան և հաստատվեց Բելառուսում[18]: Մախլուֆի պաշտոնանկությունը կարող է համարվել իշխանությունների կողմից սիրիական հասարակության նկատմամբ ցուցաբերված բարի կամքի դրսևորում: Այս պաշտոնանկությունը պետք է դիտարկել ներքին խնդիրների չեզոքացման շրջանակում: Այդ քայլով վարչակարգը փորձում էր չեզոքացնել սիրիացիների դժգոհությունն ու ցասումը պետական պաշտոնյաների նկատմամբ, ինչպես նաև հատուկ ցույց էր տրվում այլ գերատեսչությունների ղեկավարներին, որ եթե ալավի պաշտոնյաներն ու նախագահ Ասադի ընտանիքի անդամները կարող են զրկվել իրենց պաշտոններից, ապա մյուսները պետք է չափազանց զգույշ լինեն հակահիշխանական, ընդդեմ բաասական վարչակարգի գործողություններ կատարելիս:

Այս համատեքստում պետք է դիտարկել նաև ապրիլի 14-ին նախագահ Ասադի հրամանով իր հորեղբորորդի Մունտիր ալ-Ասադի ձերբակալությունը Լաթաքիայում: Նա ալավիական շրջաններում Ասադի ընտանիքի հեղինակություն վայելող ներկայացուցիչներից է, որին նաև բաասական իշխանությանը նյութական աջակցություն տրամադրելու պատճառով մի շարք երկրներ ընդգրկել են իրենց պատժամիջոցների ցուցակներում[19]: Դամասկոսից Լաթաքիա ժամանած հատուկ ջոկատայինները շրջափակել են Լաթաքիայի Ալզիռա շրջանը, ձերբակալել նրան և Ջաբլաի օդանավակայանից հասցրել Դամասկոս, որտեղ նախագահի հետ հանդիպումից հետո նույն գիշերը Մունտիր ալ-Ասադին Հանրապետական գվարդիայի ջոկատայինները հետ են ուղեկցել Լաթաքիա: Որոշ աղբյուրների պնդմամբ Մունտիր ալ-Ասադին ձերբակալել են այն ժամանակ,

գվարդիան՝ հիմնականում փոխվարչապետ Աբդուլ Հալիմ Խադդամը և նախկին ՀՈՒ ԳՇ պետ Հիքմեթ Շիհաբին, կարողացան հետ համոզել նախագահ Բաշարին արգելել այդ կոմիտեների գործունեությունը և կրկին անցնել ավտորիտար կառավարման: Բահջաթ Սուլեյմանը թողեց իր պաշտոնը և նշանակվեց Հորդանանում Սիրիայի դեսպան, իսկ Բաշար ալ-Ասադի քեռորդի Հաֆեզ Մախլուֆը նշանակվեց 40-րդ մասնաճյուղի ղեկավար:

[18] Aziz J., Assad Dismisses Security Chief of Powerful Branch 40, Washington D.C., October 16, 2014, http://www.al-monitor.com/pulse/originals/2014/10/change-leadership-damascus-syria-regime.html#

[19] Alajlan A., Syria: Bashar al-Assad Arrests Own Cousin Munther for Kidnapping Links, International Business Times, 14.04.2015.

երբ Ազգային անվտանգության բյուրոն հաստատել է Մունտիր ալ-Ասադի և նախագահ Ասադի հորեղբայր Ռիֆաթի միջև հարաբերությունների մասին տեղեկությունը[20], իսկ սիրիական Ալ-Ախբար թերթի փոխանցմամբ Մունտիրի ձերբակալությունը կապված է նրա՝ ալավիական շրջաններում ծավալած ինքնագործունեության հետ, մասնավորապես հանցագործ խմբավորումներից մեկին սեփական ուժերով առևանգելու փաստի արձանագրման հետ[21]: Պետք է ենթադրել, որ նման գործելաոճը վարչակարգի կողմից դիտվել է որպես սպառնալիք սեփական իշխանության նկատմամբ, քանի որ Մունտիրի ինքնագործունեությունն օրինակարգության ապահովման ուղղությամբ ի դերև է հանել բաասական իշխանության անգործությունն ալավիական շրջաններում հասարակական կարգի պահպանման և հանցագործության դեմ պայքարում:

2015 թ. մայիսի 11-ին բրիտանական «Թելեգրաֆ» և «Դեյլի Մեյլ» պարբերականները միաժամանակ լուր տարածեցին, որ Սիրիայի Ազգային անվտանգության բյուրոյի ղեկավար, հայտնի գեներալ Ալի Մամլուքը տնային կալանքի է ենթարկվել վարչակարգին ընդդիմադիր գործիչների հետ գաղտնի հանդիպումներ ունենալու և Թուրքիայի հետախուզական ծառայությունների հետ միջնորդավորված բանակցություններ վարելու մեղադրանքով[22]: Հեղինակներ Ռաթեր Շերլոքն ու Քերոլ Մալուֆը պնդում են, որ երբ կառավարական ուժերն իրենց վերահսկողությունը սկսեցին կորցնել Իդլիբի և Ջիսր Շուղուրի նկատմամբ՝[23] դրանք զիջելով ծայրահեղական զինված խմբա-

[20] Syrian President Orders Munther Assad to Damascus, by Al-Souria, 16.04.2015, http://syrianobserver.com/EN/News/29027/Syrian_President_Orders_Munther_Assad_Damascus

[21] http://www.al-akhbar.com/syria?page=12

[22] Sherlock R., and Malouf C., Bashar al-Assad's Spy Chief Arrested Over Syria Coup Plot, The Telegraph, London, 11.05.2015. http://www.telegraph.co.uk/news/worldnews/middleeast/syria/11596142/Bashar-al-Assads-spy-chief-arrested-over-Syria-coup-plot.html

Hall J., Syrian spy Chief is Arrested after Plotting with Rebel Sympathisers to Stage Coup and Planning to Overthrow the Assad Regime, Mail Online, Lonodn, 11.05.2015. http://www.dailymail.co.uk/news/article-3076426/Syrian-spy-chief-arrested-plotting-rebel-sympathisers-stage-coup-planning-overthrow-Assad-regime.html

[23] 2015 թ. ապրիլի 22-ին հակահիշխանական զինված խմբավորումները սկսեցին իրենց գրոհը Ջիսր ալ-Շուղուր բնակավայրի վրա: Այս բնակավայրի

վորումներին, այդ թվում նաև հայտնի Ջաբհաթ Ան-Նուսրային, գեներալ Ալի Մամլուքը ենթադրաբար սկսել է կապեր հաստատել վարչակարգին ընդդիմացող տարբեր պետությունների հատուկ ծառայությունների ներկայացուցիչների և սիրիացի ընդդիմադիր գործիչների հետ: Նա կարողացել է նաև հալեպցի մի գործարարի միջոցով կապ հաստատել նաև Բաշար ալ-Ասադի հորեղբայր, դեռևս 1997 թ. Սիրիայից վտարված Ռիֆաթ ալ-Ասադի հետ, չնայած Ռիֆաթ ալ-Ասադը որևէ մեկնաբանություն չի արել այս լրատվության հետ կապված[24]: Ալի Մամլուքին ենթադրյալ տնային կալանքի ենթարկելը Բաշար ալ-Ասադի վարչակարգի ներսում աճող անվստահության մթնոլորտի և ձևավորվող ճգնաժամի արդյունքն էր: Բաասական և անվտանգության ոլորտի պետական ծառայողներն անհանգստանում էին ապստամբական ուժերի կողմից տարբեր ուղղություններով առաջխաղացումների և Սիրիայի դաշնակից Իրանի զինվորական և քաղաքացիական պաշտոնյաների աճող ազդեցության պատճառով: Ներկայում իրանցի պաշտոնյաները Սիրիայի կառավարությունում առաջնակարգ ղեկավարման պաշտոններ են զբաղեցնում, սկսած կենտրոնական բանկից մինչև մարտադաշտում տարբեր հրամանատարական պաշտոններ: Նախագահական նստավայրում նույնպես գլխավոր խորհրդականների պաշտոններում իրանցիներ են նշանակված, իսկ Ալի Մամլուքը, որը երկրի ամենաազդեցիկ կառույցներից մեկի ղեկավարն էր և համարվում էր նախագահ Բաշար ալ-Ասադի ամենավստահելի գործիչներից մեկը, չէր կարողանում հանդուրժել ուժերի հավասարակշռության տվյալ տրամաբանությունը:

Հուլիսի վերջին, սակայն, բրիտանական լրատվամիջոցների տրամադրած վերոնշյալ տեղեկատվությանը հակասող լուրեր տարածվեցին, որ Ալի Մամլուքն այցելել է Սաուդյան Արաբիա և Մասկատ: Նրա այս այցը ցույց տվեց, որ Սաուդյան

---

գրավման գլխավոր նպատակը կառավարական ուժերի թիկունքային ապահովման համար ռազմավարական նշանակություն ունեցող Իդլիբ-Լաթաքիա ավտոճանապարհի նկատմամբ վերահսկողության սահմանումն էր: Արդեն ապրիլի 28-ին կառավարական ուժերը տեղի տվեցին հիմնականում Ջայշ ալ-Ֆաթհ խմբավորման գրոհայինների ներգրավմամբ հարձակումներին և քաղաքի նկատմամբ վերահսկողությունն անցավ երկրի հյուսիսարևմտյան շրջանում գործող տարբեր զինված խմբավորումներից կազմված զինյալների ձեռքը: Karouny M., Islamist Fighters Seize Syria's Jisr Al-Shughour, Army says redeploys, Reuters, 25.04.2015.

[24] Sherlock R., and Malouf C., նշվ. աշխ.:

Արաբիան և Օմանն առաջին անգամ հրավիրել են բարձրաստիճան սիրիացի պաշտոնյային՝ քննարկելու սիրիական ճգնաժամի քաղաքական հանգուցալուծման ճանապարհները[25]: Սիրիայի արտգործնախարարության պաշտոնական կայքի համաձայն՝ Մամլուքի այցելությանը հաջորդեց օգոստոսի 8-ին Սիրիայի արտաքին գործերի նախարար Ուալիդ Մուալլիմի պաշտոնական այցը Մասկատ, որտեղ նա հանդիպեց Օմանի իր պաշտոնակցի՝ Յուսուֆ բին Ալաուիի հետ՝ քննարկելու սիրիական ճգնաժամի ապագա հանգուցալուծումը, որով պետք է ապահովվեին Սիրիայի ինքնիշխանությունը, միասնականությունը և տարածքային ամբողջականությունը[26]: Մամլուքի պատվիրակության կազմում ընդգրկված անդամների՝ «Ֆորին Փոլիսի» կայքին տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Մամլուքն այցելել էր Ջիդդահ և Մասկատ՝ շարունակելու Սիրիայում քաղաքացիական պատերազմի խաղաղ հանգուցալուծմանը միտված իր առաջարկությունները: Բանակցությունները սաուդական և իրանական կողմի հետ սկսվել և գաղտնի ընթանում էին դեռևս ամիսներ առաջ: Ալի Մամլուքն իր գործընկերների վկայությամբ ռազմավարական մտածողությամբ օժտված կարևոր պաշտոնյա է, ով կարողանում է կառավարել բաասական վարչակարգի անվտանգության մարմինները և պահել դրանց միջև մրցակցային հարաբերությունները[27]: Ալի Մամլուքի այցելությունները Սաուդյան Արաբիա և Օման, ինչպես նաև ակտիվ գործունեությունը հիմք են տալիս ենթադրելու, որ բրիտանական մամուլի կողմից նրան տնային կալանքի ենթարկելու տեղեկատվությունը հնարավոր է՝ անհիմն էր, այսինքն՝ վերջինս իրականում ազատության մեջ է եղել, և նման լուրեր տարածելովէ վարչակարգը նպատակ է ունեցել զգոնություն հաղորդելու մյուս պաշտոնյաների շրջանում, որոնք Իդլիբի և Ջիսր ալ-Շուղուրի ապստամբական ուժերի ձեռքն անցնելուց հետո հնարավոր է՝ փորձեին հրաժարվել իրենց ղեկավար պաշտոններից և խորացնեին ներհամակարգային ճգնաժամը երկրում՝ այդպես ավելի թուլացնելով բաասական իշխա-

[25] Bowen A., Mcinnis M., The Saudi-Syrian Back Channel to End the War, Foreign Policy, Washington DC, 17.08.2015, https://foreignpolicy.com /2015/08/17/ the-saudi-syrian-back-channel-to-end-the-war-iran/.

[26] http://www.mofa.gov.sy/ar/news171.

[27] Bowen A., Mcinnis M., նշվ. աշխ., https://foreignpolicy.com/2015/08/17/the-saudi-syrian-back-channel-to-end-the-war-iran/.

նության հիմքերը: «Ֆորին Փոլիսի» պարբերականի հոդվածագիրները նույնպես պնդում են, որ Ալի Մամլուքը մյուս սիրիացի զինվորական և անվտանգության ոլորտի գործիչների հետ միասին անհանգստացած էր Սիրիայում իրանական ազդեցության մեծացմամբ, քանի որ ոչ մի ռազմավարական և օպերատիվ մակարդակի որոշում չէր կայացվում առանց իրանական կողմի իմացության: Մամլուքը և մյուս պաշտոնյաները գտնում էին, որ պաշտոնական Թեհրանի ներգրավվածությունը սիրիական ներքին գործերին աստիճանաբար չեզոքացնում է սիրիական ղեկավար էլիտայի որոշիչ դերը երկրի ապագայի կառուցման գործում[28]:

Երրորդ գործոնը վարչակարգի ներսում պետության կայունության ապահովման հարցում տարակարծությունների և ոչ միասնական տրամադրությունների առկայությունն է: Տասնյակ հազարավոր զոհերից հետո ալավիական համայնքում հոգնածության տրամադրություններ են նշմարվում: Դամասկոսում և Լաթաքիայում կառավարական ուժերի զորահավաքը չի լուծել բանակի թվային ապահովման խնդիրը: Բազմաթիվ ընտանիքներ միջոցներ են ձեռնարկում՝ իրենց չափահաս տարիքի շեմը հատող զավակներին Սիրիայից դուրս տեղափոխելու համար: Ավելին, դեռևս 2013 թ. ամռանը Տաբկայի օդանավակայանի կորստից հետո ձևավորված ալավիական «Հայրենիքի կանչը» հակահիշխանական շարժումը կարողացել է գոյատևել՝ չնայած այն ճնշելու և արմատախիլ անելու իշխանությունների բազմաթիվ փորձերին: Միևնույն ժամանակ բաասական իշխանությունները փորձում էին համախմբել երկրի դրուզական համայնքներին, չնայած նրանք ի սկզբանե չեզոքություն են պահել՝ միանշանակորեն չպաշտպանելով հակամարտող ոչ մի կողմի[29]: Այսպիսի բարդ իրադրությունը ստիպում է, որ նախագահ Ասադը հուլիսի 25-ին դասալիքների և բանակում ծառայելուց խուսափողների համար համաներման ակտ է ստորագրում: Հուլիսի 26-ին ելույթ ունենալով պետական և կառավարական մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ՝ Բաշար ալ-Ասադը անթաքույց ընդգծում է. «Սիրիական բանակը զինվորների կարիք ունի: Բանակը չունի

[28] Նույն տեղում:

[29] Samaha N., Trapped between Assad, Israel, and Al-Qaeda, Foreign Policy, 22.06.2015. http://foreignpolicy.com/2015/06/22/druze-syria-assad-israel-netanyahu/

մարդկային այն միջոցները, որպեսզի կարողանա իր վերահսկողության տակ պահել երկրի բոլոր շրջանները, մանավանդ որ ապստամբական ուժերը հսկայական աջակցություն են ստանում արտերկրից, հիմնականում Թուրքիայից, Սաուդյան Արաբիայից և Կատարից: Մենք պետք է հստակեցնենք կարևոր ռազմավարական շրջանները մեզ համար և դրանք պահենք մեր վերահսկողության տակ: Պարտություն բառը սիրիական բանակի բառարանում չկա, մենք պետք է մարտնչենք և պետք է հաղթենք»: Սիրիական բանակը հուլիսի սկզբին սկսել է նոր զորահավաք՝ զինվորական ուժի պակասը լրացնելու խնդրին լուծում տալու համար: Մարդու իրավունքների սիրիական դիտորդ (Syrian Observatory for Human Rights) կազմակերպության տվյալներով[30] շուրջ 70 հազար սիրիացիներ խուսափել են պարտադիր զինվորական ծառայության անցնելուց, 2011 թ. ի վեր սիրիական բանակի ավելի քան 80 հազար զինվորներ և սպաներ են զոհվել ծայրահեղական ջիհադիստների և ապստամբների տարբեր խմբերի դեմ պայքարում[31]: Հորդանանցի հոդվածագիր Նաբիհ Բուլոսը բրիտանական «Թելեգրաֆ» պարբերականում անդրադառնում է օգոստոսի 8-ին Լաթաքիայում սկսված բողոքի ցույցերին, որոնց պատճառ է հանդիսացել այն, որ նախագահ Բաշար ալ-Ասադի զարմիկներից մեկը՝ Սուլեյման ալ-Ասադը, օգոստոսի 4-ի երեկոյան Լաթաքիայի մայրուղիներից մեկի վրա, ճանապարհը իրեն չզիջելու պատճառով, գնդակահարել էր սիրիական բանակի գնդապետներից Հասան ալ-Շեյխին: Այս դեպքը բողոքի ալիք բարձրացրեց ալավիական շրջանում, մանավանդ Լաթաքիայում: Իշխանամետ «Դամասկոսն այսօր» ինտերնետային կայքէջը տեսանյութեր էր ներբեռնել, որտեղ երևում էր, թե ինչպես էր զայրացած ամբոխը «Մարդիկ ուզում են պատժել Սուլեյմանին» կոչերով ցույցի դուրս եկել Լաթաքիայում: Չնայած բողոքավորներն ազգային միասնության կոչեր էին անում ելույթների ժամանակ, սակայն այս դեպքը շատերը համարում են

[30] Syrian Observatory for Human Rights Report, By numbers. The two speeches of July bring misfortune and casualties on the regime forces and allied militiamen http://www.syriahr.com/en/2015/08/by-numbers-the-two-speeches-of-july-bring-misfortune-and-casualties-on-the-regime-forces-and-allied-militiamen/.

[31] Tisdall S., Syrian President Admits Military Setbacks, in First Public Speech for a Year, The Guardian, 26.07.2015. http://www.theguardian.com/world/2015/jul/26/syrian-president-public-speech-bashar-al-assad

Ասադի կառավարման դեմ ալավիական համայնքում աճող դժգոհության նշաններից մեկը:

Ներկայացնելով Սիրիայում 2015 թ. առաջին կեսին տեղի ունեցած իրադարձությունների որոշ ասպեկտներն ու վարչակարգի ներսում իրականացված փոփոխությունների պատճառներն ու նպատակները՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. օգոստոսի 26-ին լիբանանյան ալ-Մանար հեռուստաընկերությանը տված հարցազրույցի ժամանակ նախագահ Բաշար ալ-Ասադն ընդգծեց, որ Ռուսաստանի և Իրանի աջակցության հաստատակամ շարունակության շնորհիվ հնարավոր կլինի հաղթանակներ գրանցել և ապահովել երկրում հարաբերական կայունությունը[32]: Սակայն, հաշվի առնելով քննարկված ժամանակաշրջանում երկրի տարածքի նկատմամբ սիրիական բանակի վերահսկողության գրեթե կայուն անկումը, կարելի է պնդել, որ բաասական վարչակարգի դիրքերը երկրում աստիճանաբար թուլանում են: Պետք է ենթադրել, որ նախագահ Ասադի այս հարցազրույցի ընթացքում արված հիմնական շեշտադրումները հիմնավորվել են Իրանի միջուկային ծրագրի շուրջ P5+1 և Իրան բանակցային ֆորմատով Վիեննայում 2015 թ. հուլիսի 15-ին ձեռք բերված պայմանավորվածության՝ սիրիական վարչակարգի ռազմաքաղաքական պոտենցիալի բարձրացման վրա դրական ազդեցության հնարավորության ընկալմամբ:
2. Իրանական ազդեցությունն ու ներկայությունը Սիրիայում հակասական նշանակություն է ունենում սիրիական վարչակարգի գործունեության և հետաքրքրությունների վրա՝ նկատի առնելով ալավի գործիչների միջև հիմնականում այդ գործոնով պայմանավորված հակասությունները: Բաասական վարչակարգի կողմից Սիրիայում իրանական տարրի ներգրավման խթանումը, վարչակարգի տեսանկյունից, ռազմական և տնտեսական առումով դրական ազդեցություն է ունենում Սիրիայի վրա՝ օգնելով իշխող էլիտային ռազմական հաջողություններ արձանագրել երկրի որոշ շրջաններում, թույլ չտալ զինված խմբավորումների կողմից Սիրիայի ամբողջական մասնատումը, նպաստել սիրիական բանակի մարտունակության ապահովմանը,

[32] http://www.bbc.com/news/world-middle-east-34058893

հնարավորինս կարգավորել երկրի տնտեսության ռազմավարական նշանակության ճյուղերի, հիմնականում նավթագազային արդյունաբերության և էներգետիկայի ոլորտի անխափան աշխատանքը: Սակայն մյուս կողմից իրանական տարրի ներկայությունը քաղաքական առումով բացասական ազդեցություն է ունենում ալավիական վարչակարգի ռազմական և քաղաքական գործիչների միջև լարված հարաբերությունների ձևավորման վրա՝ անուղղակիորեն սպառնալով վարչակարգի կայունությանը: Փաստորեն իրանական ազդեցության խթանումը ոչ միանշանակ ազդեցություն է ունենում վարչակարգի ներքին և արտաքին խնդիրների լուծման վրա, և դեռևս իշխող էլիտան Սիրիայում չի կարողանում կողմնորոշվել այդ ազդեցության հավասարակշռման հարցում, քանի որ ռազմական և տնտեսական մարտահրավերները հիմնականում Իրանի ներգրավմամբ են լուծվում, իսկ ներքաղաքական խնդիրների և վարչակարգի անդամների միջև հարաբերությունների կարգավորումը դեռևս մնում է ալավիական համայնքի շահերի և հավաքական անվտանգության գիտակցման շրջանակում:

3. Սիրիական ճգնաժամին խաղաղ լուծում տալու նպատակով միջնորդավորված բանակցությունները շարունակվում են: Միջուկային խնդրի շուրջ Իրան-Արևմուտք հարաբերությունների բարելավումը հնարավոր է հիմք հանդիսանա սիրիական ճգնաժամի հարցում Իրան-Արևմուտք հնարավոր համագործակցության համար: Սիրիական հիմնախնդրի լուծման հարցում միջազգային դիվանագիտության առջև ծառացած կարևորագույն մարտահրավերներից մեկը իրանական և տարածաշրջանի մյուս խաղացող պետությունների՝ Թուրքիայի, Սաուդյան Արաբիայի և Ծոցի արաբական միապետությունների շահերի հավասարակշռումն է Սիրիայում:
4. Հաշվի առնելով սիրիական բանակի ստորաբաժանումների նահանջի ռազմավարությունը՝ պետք է փաստել, որ վարչակարգի կենսական շահերը թելադրում են Դամասկոս-Հոմս-Համա-Իդլիբ-Լաթաքիա բնակավայրերի երկայնքով դեպի արևմուտք՝ Միջերկրական ծով ընկած ռազմավարական նշանակության տարածքները պահել ալավի-բաասական իշխանության ամբողջական վերահսկողության տակ: Սիրիայի Արաբական Հանրապե-

տության սահմանների վերաձևման գործընթացը շարունակվում է, որին անխուսափելիորեն իր մասնակցությունն է ունենում նաև ալավի-բաասական վարչակարգն իր ռազմական և դիվանագիտական հնարավորությունների անբավարար լինելու հետևանքով: